*ՆԱԽԱԳԻԾ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հոդված 1.* Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի ՀՕ-528-Ն քրեական օրենսգրքի ~~(այսուհետ` Օրենսգիրք)~~ 332³ -րդ հոդվածում`

1. Վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ. «Փաստաբանի կամ նոտարի գործունեության իրականացմանը խոչընդոտելը կամ, կապված նրա գործունեության իրականացման հետ, սպառնալը»,

~~1~~2. 1-ին մասից հանել «Պաշտոնատար անձի կողմից» բառերը,

~~2~~3. 1-ին և 2-րդ մասերում «լիազորությունների» բառը փոխարինել «գործունեության» բառով

~~3~~4. լրացնել ~~հետեւյալ բովանդակությամբ 2.1-րդ մաս.~~ նոր 3-րդ մասով.

«~~2.1.~~3. Սույն հոդվածի 1-ին ~~եւ~~ և 2-րդ մասերով նախատեսված արարքները, որոնք կատարվել ~~է~~ են ~~պաշտոնատար անձն իր~~ պաշտոնեական դիրքն օգտագործելով`

պատժվում են տուգանքով` նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ` առավելագույնը երեք տարի ժամկետով` որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով` առավելագույնը երկու տարի ժամկետով կամ առանց դրա:»:

*Հոդված 2.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից: